

SOS ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ ՎԵՐԱՓՈՒՄԱՆ



«Աստուածամոր բացառիկ հանգամանքին երկու պատճառներ կրճանք մատնանշել, որոնք իրարմէ անբաժան են. առաջինը, բնականաբար, Քրիստոսի Մայր ըլլալն է, եւ իր այդ հանգամանքով մեծագոյն դերը կատարելն է Անոր անման եւ մանկութեան տարիներուն: Երկրորդ՝ Աստուածամայրը ունեցած է իր լիութեան մէջ այն հիմնական յատկութիւնները եւ առաքինութիւնները, որոնք անհրաժեշտ են սուրբ մը կազմելու համար. այսինքն՝ խոնարհութիւն, համբերութիւն, մաքուր սիրտ, աստուածսիրութիւն, մարդասիրութիւն ու մանաւանդ անաչալլ համակերպութիւն Աստուծոյ կամքին», Շնորհք Արք. Գալուստեան:

Ա. ՏԱՐԻ | ԹԻԻ 6 | ՕԳՈՍՏՈՍ 2007

Ս. ՅԱԿՈԲ ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՑ ՏԵՂԵԿԱՏՈՒ

Հոգեւոր Հովիւին Ե-ճամակի հասցէ՝ derkarnig@sourphagop.com
 Զրի բաժանորդագրման համար՝ gantegh@sourphagop.com
 Մեզի հետ կապ պահելու համար՝ eglise58@sourphagop.com



www.sourphagop.org/gantegh

SOS ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ ՎԵՐԱՓՈՒՄԱՆ

ԿԻՐԱԿԻ, 12 ՕԳՈՍՏՈՍ, 2007

Աստուածածնի Վերափոխման տօնը կը յիշատակէ Ս. Կոյս Մարիամի մահը եւ երկինք փոխադրուիլը: Աստուածածնի նուիրուած բոլոր տօները Տէրունի կը համարուին. այսինքն՝ տօներ՝ որոնք Տիրոջ յատկացուած են: Աստուածածնի տօները անմիջականօրէն առնչուած են Քրիստոսի. Քրիստոս ինք կը պաշտուի, իսկ Ս. Կոյսը կը մեծարուի: Վերափոխման առիթով Եկեղեցին կը պատմէ Քրիստոսի եւջը երկինքէն եւ իր մայրը երկինք տանիլը: Այդ է պատճառը որ երբ Երեքսրբեանը, այսինքն՝ «Սուրբ Աստուած»ը կ'երգուի, կ'ըսուի՝ «Սուրբ Աստուած, սուրբ եւ հզօր, սուրբ եւ անմահ, որ եկար որպէսզի մայրդ՝ Ս. Կոյսը փոխադրես. ողորմէ՛ մեզի»: Այս տօնը Հայ եկեղեցւոյ հինգ մեծ տօներէն կամ ինչպէս կ'ըսուի Տաղաարներէն մէկն է. չորրորդը:

Եւ կը կատարուի Օգոստոս 15-ին ամենէն մօտիկ Կիրակին:



Աստուածածնի Վերափոխման տօնին առիթով Հայ եկեղեցիներուն մէջ խաղողի օրհնութիւն կ'ըլլայ: Թէ ինչո՞ւ: Գլխաւորաբար՝ որովհետեւ անոնք խորհրդանշան եւ հրաւեր են հաւատքի գործերու: Յիսուս ըսած է. «Ես եմ ճշմարիտ որթատուկը, եւ Հայրս մշակն է: Անիկա կը կտրէ վրաս հաստատուած բոլոր այն ճիւղերը, որոնք պտուղ չեն տար, իսկ բոլոր անոնք որոնք պտուղ կու տան՝ յօտելով կը մաքրէ, որպէսզի աւելի պտղաբեր ըլլան» (15.1-2):

ՅԻՇԱՏԱԿ ԵՓԵՍՈՍԻ ԺՈՂՈՎԻ 200 ՀԱՅՐԱՊԵՏՆԵՐՈՒՆ

ՇԱԲԱԹ, 4 ՕԳՈՍՏՈՍ, 2007

Եփեսոսի Ժողովը Տիեզերական Եկեղեցւոյ երրորդ կարեւոր համախմբումն է: Իսկ Նախաքաղ-կերոնական եկեղեցիներուն համար, որոնց մէջ է Հայ եկեղեցին, անիկա վերջին Տիեզերական Ժողովն է: Հայ եկեղեցին կ'ընդունի երեք Տիեզերական Ժողովներ. առաջինը Նիկիոյ մէջ գումարուած է 325-ին, որ Քրիստոսի Հօր համագոյակից ըլլալը կը հռչակէ, եւ որմէ կը բխի «Հաւատքի Հանգանակ»ը. երկրորդը Կոստանդնուպոլսոյ մէջ՝ 381-ին, որ Ս. Հոգիին աստուած ութիւնը կը վերահաստատէ. եւ երրորդը Եփեսոսի մէջ՝ 431-ին, որ կը հռչակէ Քրիստոսը իբր աստուածամարդկային մէկ բնութիւն:

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

Սիրելի ընթերցող, այս մի քանի տողերը կարդացած պահուող, խորունկ շունչ մը բաշէ՛ մտիդ սրտիդ սենեակը եւ դադար առ առօրեայիդ թոռուփոհէն:

Այո, բոլորս այ կը փնտռենք այն ինչ կրկնակիօրէն կը խոստաւի մեզմէ: Կոպէնք ճանչնալ թէ՛ վնեղ եւ թէ՛ միարբ: Անհանգիստ կ'որոնենք... քարին սուկ, ամսին մէջ, ծառի կանաչոյթեան, ջրի սկունքին, կրակին ընդերքը, հովին ծննդավայրը, դրացիին աչքերուն, մուրացիկի ափին, մանկական հրճուանքին, մայրական նուիրումին, սիրոյ հպումին, ալեհեր փորձառոյթեան, առողջ մտածումին, ժրջան աշխատանքին... մէջ:

Մեր հոգին կը ճանչնայ արդէն լոյսի այդ նշույլը... որ օր մը կորսնցուցինք: Հաստատ՝ կը տենչանք նոյնինքն Քրիստոսի ներկայոյթեան, որ այդ բոլորէն աննկարագրելիօրէն շատ աւելին է եւ կը բաշխուի... ըստ սուրբերու վկայոյթեան:

Եկո՛ւր գտնենք վկայ... իրաբանչիքիս սրտի դրան ետին... Նոր Աշխարհի մը գահին բազմած, եւ ջնջնք Անով:

Եկո՛ւր յիշենք, թէ Անոր ուղիին մէջ միայն մեր ինքնուրոյնը կը պայծառանայ:

ԴԵՊԻ ՅԻՄՆԱՄԵԱԿԸ Ս. ՅԱԿՈԲԻ ՀԱՄԱՅՆՔԻՆ

Լեւոն Տէր Ասատրուրեան 14 Յունուար, 1980-ին «Հորիզոն» շաբաթաթերթին տրուած յօդուածի մը մէջ՝ ակնարկելով Աէն Զօթիքեան Ս. Յակոբի եկեղեցւոյ եւ կեդրոնի ստեղծումին, կ'ըսէր. «Աչք պէտք է ունենալ եւ հոգի, տեսնելու համար (...) վեց հարիւր ազգակիցներու հոգիի պատկերը, այնքան յստակ ու նման մեր վաղեմի պապերու, հայրերու եւ պաշտամունքի արժանի մայրերու պատկերին»: Ան կը թելադրէր, որ Աէն Զօթիքի Ս. Յակոբը արդիւնքն էր հայ ստեղծագործ ոգիին, ուր անոր վերապրումին հանճարը կը բնակի:



Աազան Մկրտոյթեան Աէն Զօթիքեան Ս. Յակոբ Եկեղեցիին

HYMNE À LA MÈRE DE DIEU

Aujourd'hui les Saints réunis, -
 Apôtres bénis et femmes chastes
 En vêtements lumineux comme des
 flambeaux, -
 Ont allumé leurs lampes
 Et chanté à l'unisson :
 Bénie êtes vous, la plus louée parmi les
 femmes.

Aujourd'hui, après avoir placé la Vierge
 sainte à la porte du tombeau,
 Ils ont espéré et attendu l'avènement du
 Seigneur Lui-même.
 Et voilà, ils ont vu dans les plus hauts
 sommets, le Créateur,
 Venant avec une multitude d'anges,
 Tandis qu'ils chantaient à l'unisson :
 Bénie êtes vous, la plus louée parmi les
 femmes.

Aujourd'hui ils ont vu la sainte Vierge
 voler dans les Cieux,
 Et, sur des chariots de nuages montant
 vers les cieux,
 Entrer, avec les vierges sages,
 dans les tabernacles célestes.
 Et à l'unisson, elles chantaient:
 Bénie êtes vous, la plus louée
 parmi les femmes.

Aujourd'hui, accompagné des
 Chérubins à multiples yeux
 Et des Séraphins à six ailes,
 Vous êtes entrés dans le tabernacle
 orné de sept étoiles
 Et vous avez vu les divers trônes préparés
 pour vous, Ô Dame.
 Nous aussi chantons à l'unisson :
 Bénie êtes vous,
 la plus louée parmi les femmes.

HYMN TO THE MOTHER OF GOD

Today the gathered Saints, -
 Blessed apostles and chaste women
 In garments luminous like torches, -
 Lit their lamps
 And sang in unison:
 Blessed are You, most praised
 among women.

Today having placed the holy Virgin
 at the door of the tomb,
 They awaited and expected the coming
 of the Lord Himself.
 And behold, they saw on the highest
 heights the Creator,
 Coming with a multitude of angels,
 While they sang in unison:
 Blessed are you, most praised
 among women.

Today they saw the Holy Virgin flying
 through the air
 And on cloudy chariots ascending
 upward into the heavens,
 With the wise virgins entering into
 heavenly tabernacles.
 And in unison they sang:
 Blessed are you, most praised among
 women.

Today, accompanied by the many-eyed
 Cherubim
 And the six-winged Seraphim,
 You entered into the seven starred
 tabernacle
 And saw the various thrones prepared
 for you, O Lady.
 We sing too in unison:
 Blessed are you, most praised among
 women.

ՇԱՐԱԿԱՆ ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ

Այսօր համատեղում սուրբերը, -
 Զահերու պէս լուսաւոր զգեստներով
 Երանելի առաքեալները եւ
 մաքրակեցաղ կիները, -
 Իրենց լապտերները կը վառէին,
 Եւ միաձայնութեամբ կ'եղանակէին.
 - Օրհնեա՛լ ես, կիներէն ամենօրհնեալդ:

Այսօր Ս. Կոյսը գերեզմանի դրան
 մօտ դնելով,
 Կը սպասէին եւ կ'ակնկալէին որ
 Տէրը անձնապէս գար.
 Եւ ահա էն վերը երկնքին կը
 տեսնէին արարիչը,
 Որ բազում հրեշտակներով կու գար:
 Մինչ անոնք միաձայնութեամբ
 կ'եղանակէին.
 - Օրհնեա՛լ ես, կիներէն
 ամենօրհնեալդ:

Այսօր կը տեսնէին Ս. Կոյսը որ օդին
 մէջ կը թռչէր,
 Եւ ամպեղէն կառքերով դէպի վեր՝
 երկինք կը համբառնար,
 Իմաստուն կոյսերուն հետ
 Մտնելով երկնային խորաններէն ներս:
 Մինչ անոնք միաձայնութեամբ
 կ'եղանակէին.
 - Օրհնեա՛լ ես, կիներէն
 ամենօրհնեալդ:

Այսօր բազմաչեայ քերովբէներուն
 Եւ վեցթեւեան սերովբէներուն հետ
 Եօթնաստեղեան խորանը մտար
 Եւ տեսար զանազան աթոռները, քեզի՝
 Տիրուհիիդ համար պատրաստուած:
 Մենք ալ անոնց հետ կ'երգենք ըսելով՝
 - Օրհնեալ ես, կիներէն
 ամենօրհնեալդ:

ԲԱՅԱՏՐԱԿԱՆ

Վերեւ թարգմանուած շարականը՝ Աստուածածնի Վերափոխման հոգեւոր երգին առաջին տունն է: Զանկա կարճ բացատրեմ քեզի, սիրելի ընթերցող: Նախ, ուշագրաւ է, որ շարականը դէպքը կը տեսնէ իբր այսօրուայ եղելութիւն: Բոլոր շարականներուն ալ մէջ դէպքերը «այսօրուայ» կը պատկանին: Կրօնական ժամանակը՝ ժամացուցային ժամանակը չէ. հաւատքի դէպքերը «այսօրուայ» եղելութիւններ են: Հաւատքի ժամանակին մէջ անցեալը, ներկան եւ ապագան նոյն տեղը կը գտնուին. հոն ուր հաւատալը է: Երկրորդ բացատրելի կէտը. Աստուածածնի երկինք մուտքը ֆիզիքական՞ է: Ծարականը մեզի կ'ըսէ, թէ ան իմաստուն կոյսերուն հետ երկինք կը մտնէ. այսինքն՝ իր մուտքը հոգիի մուտք է եւ ոչ թէ մարմնի: Երրորդ կէտը. ո՞ր է մտած վայրը: Ի՞նչ կը նշանակէ «եօթնաստեղեան խորան» փոխաբերութիւնը. Հայր Աւետիքեանի բացատրութեամբ՝ հոն ուր սուրբերն են: Իսկ «զանազան աթոռներ» տեսնելու պատկերը. կատարեալ իշխանութեան կը հասնի, ըսել կ'ուզէ: «Կիներէն ամենօրհնեալ»ը սրբութեան եւ արդարութեան կատարեալ իշխանութիւն ունի:

ԳՔ

Please note that this is a simplified explanation of the events in the Armenian church for the month of August.
 Veuillez noter que ces explications représentent une version simplifiée des cérémonies de l'église arménienne pour le mois de août.

L'impression de ce numéro a été rendue possible grâce au généreux soutien de Mr. et Mme Dikran et Manouchak Karlozian | The printing of this issue of Gantegh was made possible by the generosity of Mr. & Mrs. Dikran and Manouchak Karlozian